ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԱԶԻԶՅԱՆ Ա. Ա.

Ցանկացած պատմական ժամանակաշրջան առանձնանում է իրեն բնորոշ հակամարտությունով, որը հիմնված է ինքնակազմակերպման սկզբունքների վրա: «Ավանդական» հասարակությունում, օրինակ, նման սկզբունքներից էր բռնությունը, որի օգնությամբ իշխանությունը վերաբաշխվում էր: Քանի որ դա անպայման ուղեկցվում էր ուժի կիրառմամբ, ուստի հակամարտությունները դրսևորվում էին խռովության, ապստամբության, պատերազմի ձևով, որն ավարտվում էր հակառակորդի խմբերից մեկի լիակատար ու աներկբա հաղթանակով:

Ներկայիս հասարակության մեջ բռնության սկզբունքը շարունակում է գործել, սակայն, համաձայն որոշ մասնագետների, այն աստիճանաբար տեղի է տալիս փոխզիջման փնտրտուքին, որը, թվում է՝ հակամարտող կողմերի ընդհանուր հետաքրքրություններին առավել համահունչ է: Արդի հակամարտությունները միտված են կապիտալի վերաբաժանմանը, որը ժամանակին խոշոր պատերազմների գլխավոր շարժառիթն է եղել: Հարկ է նշել, որ ավանդական և արդի հակամարտությունների միջև էական տարբերություններ չկան:

Ակնհայտ է, որ միջէթնիկ հակամարտությունները պատմական բոլոր ժամանակներում արագորեն արմատավորվել են այն տարածաշրջաններում, որտեղ առկա է եղել հակասության նշույլ անգամ: Պատահական չէ նաև, որ նման հակամարտությունների ընթացքը հաճախ պայմանավորված է լեզվական տարբերության բազմազանությամբ: Էթնիկ հակամարտությունները հիմնականում առաջանում են էթնոսների փոխդործունեության հետևանքով: Դրանց առաջացման հիմնական դրդապատճառների շարքից են էթնոսների անհավասար վիճակը, այս կամ այն ազգի իրավունքների ոտնահարումը, ռասայական խտրականությունը: Սոցիալ-տնտեսական ճգնաժամը նույնպես էական դրդապատճառ կարող է լինել: Նման իրավիճակում առաջացած տնտեսական դժվարությունների մեջ սովորաբար մեղադրվում է մեկ այլ ազգ կամ վերջինիս ներկայացուցիչը (օրինակ հրեաները մեղադրվում էին Գերմանիայի տնտեսական դժվարությունների համար 1930-ականին)[1]:

Էթնոկոնֆլիկտարանների աշխատությունների մեջ առանձնանում են էթնոքաղաքական հակամարտությունների հանգեցնող երեք փուլ, որոնք պատմական ժամանակներում շարունակաբար հաջորդել են միմյանց հասնելով մինչև մեր օրեր: Դրանք տարածքային զավթումներն են, եվրոպական գաղութացման հետևանքները և էթնիկ գաղթը: Տարածքային զավթումներն ուղեկցվում էին որոշ

---

[1] Атоян А. Д. *Конфликтология, М., 2010, с. 33-35.*

պետությունների (հիմնականում՝ կայսրությունների) կողմից տարածքների նվաճմամբ: Եվրոպական գաղութացման քաղաքականությունը, որն աշխարհագրական խոշոր հայտնագործություններով սկզբնավորվեց, նպատակ ուներ էժան շուկա և աշխատուժ ձեռք բերելու: Մյուս կողմից, էթնիկ դաղթը հիմնականում պայմանավորված էր ֆիզիկական և հոգեբանական ճնշումից խուսափելու իրողությամբ[2]:

Ընդունված է, որ էթնոքաղաքական կոնֆլիկտները սկզբնավորվում են բազմազգ պետություններում: Սակայն, կարծում ենք՝ դա նման հակամարտությունների էական դրդապատճառներից չէ, քանի որ պատմությանը հայտնի են բազմաթիվ բազմազգ պետություններ, որոնք հեռու են ազգամիջյան թշնամանքից և առճակատումից: Այսպիսով, էթնոքաղաքական հակամարտությունների դրդապատճառների մեջ զգալի գեր է ունեցել ազգայնականությունը: Համաձայն ենք Ե. Ստեպանովի դիտարկմանը, ըստ որի, ազգայնականությունից զուրկ չեն ո՛չ ավանդապաշտ, ո՛չ ժամանակակից, ո՛չ նախկին սոցիալիստական և ո՛չ էլ արդի զարգացած ժողովրդավարական պետությունները[3]: Ուստի, էթնոքաղաքական հակամարտությունների անկողմնակալ և արդյունավետ հետազոտման համար հարկ է հրաժարվել այն որպես ժամանակավոր երևույթ դիտելուց: Անհերքելի է, որ ազգայնականությունը գաղափարախոսությունների հետևանքով անընդհատ վերաձևակերպվում է, որը բազմէթնիկ հասարակության համար առավել վտանգավոր է, քանի որ մեկ ազգի շուրջ պետականության կառուցումը էթնոկենտրոնացման վտանգ է պարունակում, ստիպում «մենքը» հակադրել «մնացածին»:

Որոշ մասնագետներ պնդում են, որ արտադրական հարաբերությունների զարգացման հետևանքով ազգայնականությանը փոխարինելու է գալիս միջազգայնացումը, որն էլ էթնոքաղաքական հակամարտության հիմնական դրդապատճառներից է: Կարծում ենք՝ այս երկու երևույթը միմյանցից անկախ գոյություն են ունեցել և միմյանց հերթափոխելու անհրաժեշտություն պարզապես չունեն: Ազգայնականությունը էթնիկ համայնքի կազմավորման հաջորդ փուլն է, և դեռևս վերջինիս սկզբնավորման նախնական շրջանում կանխատեսելի էր ազգայնականությունը (թեկուզ քողարկված տարբերակով), մանավանդ, եթե հաշվի առնենք, որ էթնիկ ընդհանրության կազմավորման անհրաժեշտ տարրերից էր խմբի անդամների կողմից քաղաքական միասնության ընկալման կարևորությունը[4]:

Հայտնի է, որ հակամարտությունը անտեսում է ցանկացած սահման, ներխուժում և վարակում է նույնիսկ ամենաամուր հարաբերությունները: Հակամարտությունը հակադիր կողմերի միջև միմյանց բացառող շահերի, տեսակետների, դիրքորոշումների, լուրջ տարաձայնութ-

---

[2] Аклаев А. Р. *Этнополитическая конфликтология: анализ и менеджмент, М., 2005, с. 28-29.*

[3] Степанов Е. И. *Конфликтология переходного периода: методологические, теоретические, технологические проблемы, М., 1996, с. 194.*

[4] Weber M. *Economy and Society, N. Y., 1968, p. 27.*

յունների, սուր վեճերի ամբողջությունն է, որը ներծծվում է մարդկային գործունեության բոլոր ոլորտները՝ վերափոխելով ցանկացած հարաբերություն: Դա սոցիալական դրսևորման ձևերից է և առաջանում է նվազագույնը երկու կողմերի հետաքրքրությունների, դիրքորոշումների, շահերի իրարամերժ առկայության պայմաններում: Հակամարտությունները սերտորեն պայմանավորված են սոցիալական միջավայրով, քանզի մարդկային գործունեության անքակտելի մասն են կազմում[5]: Ակնհայտ է՝ այնտեղ, որտեղ գոյատևելու խնդիրն է, անմասն չէ նաև կոնֆլիկտը: Այն, հիրավի, այնքան հին է, որքան աշխարհը: Այսպես, դեռևս մ.թ.ա. VII-VI դդ. չին փիլիսոփաները նյութականի դրական (յան) և բացասական (ին) կողմերի փոխդործունեությունը շարժման աղբյուր էին համարում[6]: XX դ. 50-ականին կոնֆլիկտաբանությունը Կ. Բոլդուինգի[7], Ռ. Դարենդորֆի[8], Լ. Քոզերի[9] աշխատությունների շնորհիվ սկսեց արագ զարգանալ և հեղինակություն վայելել:

Արդի դիտական գրականության մեջ հակամարտությունները բաժանվում են երեք խմբի՝ կենսապայմանների, շահերի և արժեքների: Ուշագրավ է, որ սրանց բոլորին հատուկ է կոնֆլիկտակիրների «ագրեսիվ պասիվությունը»: Տարածքային, էթնոմշակութային բազմաթիվ կոնֆլիկտների հիմնական վտանգավորությունն այն է, որ կոնֆլիկտակիրները անընդունակ են կողքից իրենց դիտելու և ուրիշների սխալներից դասեր քաղելու հարցում. իսկ փորձը պատմական երևույթ է, որը կրկնվում է գրեթե նույնությամբ: Կարծում ենք՝ արդի կոնֆլիկտակիր երկրների հիմնական և խոշոր սխալներից է «երրորդ երկրի կամ կողմի» վրա հույս դնելը, քանզի հակամարտությանն անմիջականորեն չառնչվող կողմի ցանկությունհնարավորությունները սահմանափակ են, և այն երբևիցե չի կարող երաշխավորել, որ կոնֆլիկտը հետագայում չի բորբոքվի:

Ընդհուպ մինչև XVIII դարը հակամարտությունն ուսումնասիրվում էր դերիշխանության և ենթակայության՝ միմյանց բացառող երկու տեսանկյունից: Իսկ պետությունն էլ լիբերալ և բացարձակ կարգավորողի դերն էր իրականացնում: XIX-XX դդ. սոցիոլոգիայի շրջանակում կոնֆլիկտարանությունը տեսական հիմք է ստանում: Պարզ է դառնում, որ հակամարտություններն ամենուր և անընդհատ են, քանի որ հասարակական կյանքի անխուսափելի մասն են կազմում: Հակամարտությունների դրսևորման ամենաընդհանուր պատճառներից է մարդկանց զբաղեցրած անհավասար դիրքը, որտեղ ոմանք հրամայում են, մյուսները՝ հնազանդվում: Դրա առաջացման դրդապատճառներից է նաև անհատական և հասարակական արժեք-

---

[5] Аклаев А. Р., նշվ. աշխ., էջ 47:

[6] Жуков В. И., Краснов Б. И. *Общая и прикладная политология: учебное пособие, М., 1997, с. 227.*

[7] Kenneth Ewart Boulding. *Conflict and Defence: A General Theory, Indiana University, 1962, p. 127.*

[8] *Современный социальный конфликт. Очерк политики свободы, М., 2002, с. 300.*

[9] Coser L. *The Functions of Social Conflicts, N. Y., 1956, p. 8.*

ների անհամապատասխանությունը: Հակամարտությունները մշտական են, քանզի գոյություն չունի այնպիսի հասարակական համակարգ, որը բոլորի պահանջները բավարարելու հնարավորություն կտար:

Էթնոքաղաքական հակամարտություններն իրենց ծագմամբ, բնույթով, գաղափարգմամբ և լուծման հնարավորություններով ուրույն տեղ են զբաղեցնում կոնֆլիկտաբանության մեջ: Տարբեր երկրներում և գիտական դպրոցներում վերոնշյալ ուղղությունը հայտնի է զանազան անվանումներով՝ «էթնոկոնֆլիկտաբանություն», «էթնոքաղաքական կոնֆլիկտաբանություն», «քաղաքական էթնոկոնֆլիկտաբանություն», «էթնոքաղաքական կոնֆլիկտների տեսություն» և այլն: Չնայած դրանք օգտագործվում որպես հոմանիշներ, այնուամենայնիվ, էականորեն տարբերվում են միմյանցից: Կարծում ենք՝ առավել համապարփակ է «էթնոքաղաքական կոնֆլիկտաբանություն» տերմինը, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ ներկայումս «ուղղակի էթնիկ» կոնֆլիկտներ գոյություն չունեն: Դրանց ճնշող մեծամասնությունը քաղաքական ուղղվածություն ունի: Այնուամենայնիվ, պետք է տարբերակել հորիզոնական (երբ կոնֆլիկտներն էթնիկ խմբերի միջև են ընթանում) և ուղղահայաց էթնոքաղաքական հակամարտություններ (երբ դրանք էթնիկ խմբերի և պետության միջև են ընթանում):

Հարավային Կովկասը միշտ էլ աչքի է ընկել հակամարտությունների առատությամբ: Կարծում ենք՝ այլ կերպ հնարավոր չէր, քանի որ այդտեղ էին հատվում Արևմուտքը Արևելքի, Եվրոպան Ասիայի հետ միավորող ճանապարհները: Միևնույն ժամանակ, Կովկասում կողք կողքի դավանվում են քրիստոնեությունը և իսլամը: Տարածաշրջանը դարեր շարունակ հագեցած է եղել կայսերական պատերազմներով (Բյուզանդանդիա, օսմանյան կայսրություն, ցարական Ռուսաստան): Միաժամանակ, տարածաշրջանի էթնիկ և կրոնական բազմաշերտությունը հարևան երկրների համար բարենպաստ հնարավորություն է ստեղծել «բաժանիր և տիրիր» սկզբունքին հետևելու և Կովկասի այս կամ այն տարածքին տիրելու համար: Բացի այդ, Կովկասն անընդհատ տեղափոխությունների և վերաբնակեցման տարածք է եղել անհիշելի ժամանակներից: Հենց այստեղ են որոշակի ցեղատեսակների միաձուլումից առաջացել նոր էթնիկ ընդհանրություններ: Այդ գործընթացը հատկապես ընդհանրական բնույթ է կրել IV-VI դարերում[10]:

Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ մի դեպքում էթնիկությունը կարող է հանդես գալ միայն որպես քաղաքական պայքարի քողարկում, մեկ այլ դեպքում՝ ունենալ հակառակ ընթացք, երբ քաղաքական լոզունգների և ներկայացվող նպատակների հետևում էթնիկ հակամարտություններն են քողարկված: Այսպիսով, էթնոքաղաքական կոնֆլիկտները մեծ մասամբ կարգավիճակային բնույթ են կրում: Ուստի, կոնֆլիկտների ծավալման պատճառներից

---

[10] Гаджиев К. С. "Большая игра" на Кавказе. Вчера, сегодня, завтра, М., 2010, с. 12.

մեկը էթնիկ խմբերի փոխազդեցությունն է կամ էլ վերջինիս միջավայրի փոփոխությունը, որի ժամանակ էթնիկ խմբերից որևէ մեկի տնտեսական կամ քաղաքական կարգավիճակը նրա անդամների կողմից կարող է անընդունելի համարվել: Ընդ որում, կոնֆլիկտի պատճառ են դառնում ոչ միայն կարգավիճակի բարձրացումը կամ խտրականության դեմ պայքարը, այլև առկա կարգավիճակի կորուստը: Ուշագրավ է, որ բոլոր հակամարտությունները, որոնք առաջին հայացքից թվում են էթնիկ կամ ազգային, վաղ թե ուշ վերածվում են նաև քաղաքական հակամարտությունների: Դրանք իրենց հերթին միտում ունեն էթնիկ համարվելու:

Ընդհանրապես, էթնոքաղաքական հակամարտությունները ծագում են այս կամ այն հասարակության սոցիալ-տնտեսական դրության համեմատական բարելավման պայմաններում: Նման դրական տեղաշարժը հասարակությանը ներշնչում է ավելին ակնկալելու հույսով, որը, սակայն, հաճախ չի արդարացնում, որի հետևանքով տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակը վատթարանում է, իսկ մարդիկ դա բացատրում են ռեսուրսների անարդար, անհավասար բաշխմամբ: Այս ամենին հաջորդում է միջէթնիկ լարվածությունը, որն ուղղորդվում է ազգային վերնախավերի կողմից: Վերջիններիս էթնոքաղաքական ծրագրերը վերջնականապես ծնունդ են տալիս երկարատև, չհանգուցալուծվող հակամարտությանը[11]:

Վերոնշյալ կոնֆլիկտներն ուղեկցվում են քաղաքական գործունեության կազմակերպվածությամբ, հասարակական շարժմամբ, զանգվածային անկարգություններով, անջատողական ելույթներով և նույնիսկ քաղաքացիական պատերազմներով: Նման կոնֆլիկտները բազմագործոն են և հակամարտության մի քանի օբյեկտներով ու հիմնախնդրային գոտիներով են օժտված (օրինակ՝ տարածքային վեճեր, էթնիկ խմբերի քաղաքական կամ սոցիալական կարգավիճակի և էթնոդավանական հակասությունների հիմնախնդիրներ):

Էթնոքաղաքական կոնֆլիկտներն ամենուր են: Ըստ Զ. Ռոտշիլդի՝ XX դարի 70-80-ականներին «աշխարհի երկրների գրեթե կեսն ընկղմված էր էթնիկ պայքարի մեջ»[12]: Արդի հակամարտությունները գլխավորապես կրում են էթնիկ, առավել ստույգ՝ էթնոքաղաքական բնույթ: Համաձայն Զ. Բժեզինսկու՝ XX դ. 90-ականի սկզբներին էթնոքաղաքական կոնֆլիկտների զոհ է դարձել ավելի քան 33 մլն մարդ[13]: Սա, իհարկե, մասնագետներին լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Հետաքրքիր է, որ էթնոքաղաքական հակամարտությունները «մաքուր» տարբերակով առավել քիչ են հանդիպում: Սակայն էթնիկությունը դրսևորվում է բազմաթիվ հակամարտություններում, որոնք, իհարկե, էթնոքաղաքական չեն: Էթնոքաղաքական հակամարտության կարևորագույն առանձնահատկություններ-

---

[11] Степанов Е. И., նշվ. աշխ., էջ 205-206:

[12] Rothschild J. *Ethnopolitics: A Conceptual Framework, N. Y., 1981, p. 27.*

[13] Brzezinski Z. *Post-communist Nationalism (Foreign Affairs, 1989/1990, vol. 68, N. 5, p. 46).*

րից մեկն այն է, որ այն ունակ է կոնֆլիկտի մի տեսակից «վերափոխվելու» մեկ ուրիշի: Այսպես, սկզբնավորվելով որպես սոցիալական հակամարտություն՝ այն կարող է էթնոքաղաքական բնույթ ստանալ և վերածվել բախման՝ դրանով իսկ հասարակական զարգացման համար միանդամից ստեղծելով ապակառուցողական մի քանի վտանգ: Հստակ է՝ ազգային հողի վրա ծագած հակամարտությունը լուծելի է, սակայն այն անլուծելի է դառնում, երբ ազգային ներհակության (անտագոնիզմի) մակարդակի է հասնում: Դա միջէթնիկ հակասության այնպիսի վիճակ է, երբ հակամարտող կողմերն անընդունակ են յուրացնելու հաշտության և համաձայնության հասնելու բանական փաստարկները: Այս դեպքում հարաբերությունները անբեկանելի և միալար բնույթ են կրում, որն էլ հանգեցնում է բանականության շրջանակում չտեղավորվող միջէթնիկ պատերազմի. դա էթնոքաղաքական հակամարտության ամենածանր լուծում պահանջող եղանակն է:

Կարծում ենք՝ էթնոքաղաքական հակամարտություններից յուրաքանչյուրը կազմված է հակամարտության հաղթահարման որոշակի փուլերից, և յուրաքանչյուրի համար գոյություն ունի կարգավորման լավագույն ժամանակ, որը շրջանցելուց հետո բարդանում է կարգավորման գործընթացը:

Գաղտնիք չէ՝ տարածքի հանդեպ ցանկացած հավակնությունն արդեն իսկ հակամարտություն է, եթե այն անընդունելի է հակառակ կողմի համար: Էթնոտարածքային են համարվում ոչ բոլոր էթնիկ և տարածքային հակամարտությունները, այլ այնպիսիք, որոնք միջանկյալ դիրք են զբաղեցնում դրանց միջև:

Էթնոքաղաքական հակամարտությունների դրդապատճառները բազմաթիվ են, որոնցից մասնագետներն առանձնացնում են ազգայնականությունը (նացիոնալիզմը), որը ներկայացնում է մի ազգի ենթակայության պարտադրում մյուսին և ուղեկցվում է գաղափարախոսության, հոգեբանության, սոցիալական փորձի, աշխարհայացքի և քաղաքականության պարտադրումով: Նման դեպքում ազգային բացառիկություն ու գերազանցություն է քարոզվում՝ բորբոքելով ազգամիջյան թշնամություն, անվստահություն և կոնֆլիկտ[14]:

Էթնոքաղաքական հակամարտությունների հանգեցնող գործոններից է նաև ազգի ընկալման բազմազանությունը: Ազգը հաճախ նույնացվում է ազգայնականության հետ, որն էլ արմատական և կտրուկ քայլերի է դրդում:

Արևմտյան գրականության մեջ տարբերվում են ազգի ընկալման երկու տարատեսակ[15]՝

• «էթնիկ» (օրինակ՝ գերմանական կամ արևելյան ազգայնականությունը, որը հիմնված է «ազգային ոգու», մշակույթի և ծագումնաբանության վրա), որին հատուկ է իդեալականացումը:

---

[14] Политология. Энциклопедический словарь, М., 1993, с. 193.

[15] Коротеева В. Существуют ли общепризнанные истины о национализме? (Pro et contra, 1997, т. 2, N 3, с. 185-203).

• «Քաղաքացիական», որի դեպքում կարելի է խոսել «բանական», «քաղաքացիական» ազգայնականության մասին, որը հիմնված է քաղաքական և տնտեսական բնույթի արժեքների վրա: Քաղաքացիական ազգայնականությունը կարևորում է անհատի բարոյական և քաղաքական առաջնայնությունը:

Կարծում ենք՝ Հարավային Կովկասի էթնոքաղաքական հակամարտությունների մեջ ազգայնականությունը գլխավոր դրդապատճառ չէ, քանի որ թշնամությունը և ազգայնականության «խորը շեշտադրումը» տարածաշրջանի էթնոքաղաքական կոնֆլիկտների պարագայում գլուխ են բարձրացրել միայն զենքի ձայնը հնչելուց հետո:

Էթնոքաղաքական թշնամության (հետագայում նաև՝ հակամարտության) հանգեցրած դրդապատճառ կարող է դառնալ «կենտրոն-ծայրամաս» աշխարհակարգը: Դրա վառ օրինակ են նախկին Խորհրդային Միության տարածքում հասունացած էթնոքաղաքական հակամարտությունները: Այն պահից սկսած, երբ ծայրամասը կենտրոնի կողմից ընդունվում է որպես իրավազուրկ հպատակ, ուժեղանում են սեփական էթնիկությունը հաստատելու հավակնությունները: Կենտրոնից առանձնանալով են համակված գրեթե բոլոր ծայրամասերը, որոնք սովորաբար պայքարում են առանձին պետական-իրավական համակարգ ստեղծելու համար, ինչպես, օրինակ, Հյուսիսային Կովկասը: Ինչ վերաբերում է հարավկովկասյան էթնոքաղաքական կոնֆլիկտներին, ապա նշենք, որ «կենտրոն-ծայրամաս» իրավիճակը հատուկ է Հարավային Օսիային և Աբխազիային, սակայն Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը զերծ է վերոնշյալից, քանի որ Արցախը հիմնականում առանձին միավոր է եղել և զուրկ «ծայրամասի» բարդույթից:

Էթնոքաղաքական հակամարտությունների ծագման, ինչպես նաև հանգուցալուծման գործում մեծ է կրոնական գործոնը: Արտաքնապես այն առավել աննկատ է, սակայն առկա է գրեթե բոլոր նման հակամարտություններում: Մասնագետներից ոմանք հակված են հայ-ադրբեջանական կոնֆլիկտը նույնպես կրոնական հակասություն համարելու: Մեր խորին համոզմամբ՝ Ղարաբաղի հակամարտությունն ավելի քան հեռու է կրոնական դրդապատճառ ունենալուց. ավելին, այն բացառիկ է իր տեսակով, քանի որ եթե անգամ կրոնների տարբերություն է նկատվում, դա բացառապես քարոզչական բնույթ է կրում: Ադրբեջանը ժամանակ առ ժամանակ «մուսուլման եղբայրների» ականջին լսելի դարձնելու դիտավորությամբ փորձում է խնդրին կրոնական երանգ հաղորդել, սակայն դա այլևս հնացած և ոչ գրավիչ «շոու» է անգամ իրենց համար:

Իրականում բարդ է էթնոքաղաքական հակամարտություններ բնորոշելը, քանզի դրանք «մաքուր» տեսքով շատ հազվադեպ են հանդիպում: Այսպես, օրինակ, նախկին ԽՍՀՄ տարածքում սկզբնավորված ցանկացած սոցիալ-տնտեսական կամ քաղաքական հակամարտություն էթնիկ տարր ունի, որը պայմանավորված է ԽՍՀՄ բազմէթնիկությամբ: Համեմատության համար նշենք, որ չնայած ԽՍՀՄ-ում ռուսերենը պաշտոնական լեզու էր, Ռուսաստանը երկրի

միայն մի մասն էր, իսկ մյուս ժողովուրդներն ունեին սեփական լեզու և սովորույթներ: Էթնիկ խմբերը ԽՍՀՄ-ում հարյուրից ավել էին, որոնցից 23-ը գրեթե մեկ մլն մարդ էր կազմում: Էթնիկ բնույթի հակասությունները սովորական երևույթ էին, քանզի 1979 թ. մարդահամարի տվյալների համաձայն ռուսները ընդհանուր բնակչության 52% էին միայն[16]:

Ահա թե ինչու փլուզված ԽՍՀՄ-ի տարածքի սոցիալական, քաղաքական և էթնոքաղաքական հակամարտություններն այդչափ դժվարանջատելի են, որից էլ իրենց անհատական շահերին հետամուտ լինելիս հաճախ օգտվում են քաղաքական վերնախավերը: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ նախկին խորհրդային տարածքի ցանկացած հակամարտություն պայմանավորում է մյուսի ընթացքը, ուստի դրանք խճճելը և էլ ավելի բարդացնելն առանձնապես դժվարություն չի ներկայացնում: Սովորական էր նաև անցյալի հակասությունների հանկարծակի «վերհիշումը» և «անարդարության» դեմ պայքարի ծավալումը: ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ պետությունները նպաստեցին կոնֆլիկտակիրների քանակի ավելացմանը, որի հետևանքով 1988-1991 թթ. նախկին խորհրդային պետությունների մասնակցությամբ էթնիկ հակամարտությունների քանակը 150-ի էր հասել[17]:

Էթնոքաղաքական հակամարտությունները հիմնականում ընթանում են էթնիկ խմբերի և իրենց բազմէթնիկ հռչակած պետությունների միջև: Նման խմբերի պահանջները կարող են ունենալ լեզվական, կրոնական, ազգայնական կամ ռասայական հիմնավորում: Էթնիկ խմբերն այս պարագայում զերծ են գերիշխող դիրքից, քանի որ փոքրամասնություն են: Առավել վտանգավոր և անլուծելի իրավիճակ է ստեղծվում, երբ որևէ պետության կազմում առկա են բազմաթիվ էթնիկ փոքրամասնություններ, որոնցից ոչ մեկը գերիշխող դիրք չի զբաղեցնում (ինչպես, օրինակ, Սահարայից հարավ ընկած երկրներում)[18]: Ոչ պակաս վտանգ են ներկայացնում թույլ զարգացած երկրներից առավել զարգացած երկիր գաղթած էթնիկ փոքրամասնությունները:

Որևէ պատմական ժամանակաշրջանի համար իրական են նաև սոցիալ-տնտեսական ճգնաժամերը, որոնք էլ, իրենց հերթին, միջէթնիկ լարվածություն են ստեղծում:

Ընդհանրապես, այն պահից սկսած, երբ սոցիալական խումբն ինքն իրեն ընդունում է որպես էթնիկ միավորում, առաջ է գալիս էթնոազգայնության հարցը, որը էթնիկ փոքրամասնության համար գաղափարախոսության և քաղաքական շարժիչի դեր է կատարում: Վերջինս երեք հիմնական նպատակ է հետապնդում. 1) ինքնիշխա-

---

[16] Этнос:традиции и современность. Сборник научных трудов, Якутск, 1994, с. 179.

[17] Мукомель В., Паин Э., Попов А. Союз распался — межнациональные конфликты остались (Независимая газета, 10.1.1992).

[18] Жуков В. И., Краснов Б. И. Общая и прикладная политология, М., 1997, с. 393.

նության և ինքնակառավարման ապահովում, 2) տարածքի իրավունք, 3) սեփական մշակույթի համընդհանուր պետական մշակույթին համարժեք ընկալում: Էթնոազգայնության հիմնական քաղաքական նպատակը սեփական պետականության կառուցումն է:

Արդի փուլում էթնոքաղաքական հակամարտությունների նոր թափը գլխավորապես պայմանավորված է ինքնորոշման իրավունքի առկայությամբ: Էթնիկ խմբերն էլ, իրենց հերթին, իրավամբ արդարացի են համարում իրենց ինքնորոշման պայքարը՝ մանավանդ «ազատ և հավասար ժողովրդավարության պայմաններում»[19]:

Էթնոքաղաքականության հետ, թերևս, անմիջական կապի մեջ են գտնվում էթնիկ կրոնը և էթնոկենտրոնացումը: Էթնիկ կրոնը հիմնված է տվյալ խմբի հավատքի վրա: Էթնոկենտրոնացումն, իր հերթին, սահմանափակում է տվյալ խմբի մտածելակերպը՝ հնարավորություն ընձեռելով այլոց մշակույթը և գաղափարներն ուսումնասիրել միայն սեփականի քողի ներքո: Այսպիսով, էթնոկենտրոնացումը զրկում է արդար և ըստ էության դատելու հնարավորությունից: Սակայն, թերևս, էթնոկենտրոնացման վտանգավորությունը վերջինիս կրողներին էթնիկ փոքրամասնության բարդույթով պատելն է: Դա հոգեբանական լուրջ խնդիր է, որով հաճախ ուղեկցվում են էթնոքաղաքական հակամարտությունները:

Էթնոքաղաքական հակամարտության մյուս դրդապատճառը ինքնորոշման և անկախ պետականության ստեղծման նպատակն է: Ինքնորոշումն անհրաժեշտություն է ազգի հետագա գոյատևման համար: Ինքնորոշումը ինքնագիտակցման (սեփական ինքնության ընկալման) հաջորդ սանդղակն է, որը հնարավոր է հետաձգել, սակայն անհնար է զսպել: Լեռնային Ղարաբաղը վերջին տասնամյակներին պայքարում է սեփական ինքնորոշումը միջազգային թատերաբեմում ամրագրելու համար, որը, մեր խորին համոզմամբ, վաղ թե ուշ պետք է ընդունվի:

Եթե ընդունենք, որ էթնիկ միասնությունը զուտ մշակութային ֆենոմեն է, որն առկա է մարդկանց գիտակցության մեջ, իսկ էթնիկ հակամարտությունների արմատները սնուցվում են սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական գործընթացներով, կարելի է եզրահանգել, որ էթնիկ հակամարտություններն ինքնին չեն առաջանում, քանի որ դրանք միշտ ուղղորդվում են:

Էթնոքաղաքական հակամարտությունների դրդապատճառները, թվում է՝ արդարացի են և պատճառաբանված, սակայն հավակնություններ ներկայացնողը միշտ քաղաքական վերնախավն է, որի դիրքորոշումը հաճախ ոչ մի ընդհանրություն չի ունենում այն ժողովրդի շահերի հետ, որի անունից հանդես է գալիս: Էթնոքաղաքական հակամարտությունների ձգձգումը ստեղծում է «արտաքին թշնամու» կերպար, որի պայմաններում էլ արտաքին ուժերը հեշտ ելումուտ են անում կոնֆլիկտակիր տարածք՝ հետամուտ լինելով սեփական շահերին: Դա ևս մեկ դրդապատճառ է էթնոքա-

---

[19] Назаров М. М. *Политическая культура российского общества: 1991-1995 годы: опыт социологического исследования*, М., 1998, с. 96.

ղաքական հակամարտությունները խորը ուսումնասիրելու համար, քանի որ էթնոքաղաքական հակամարտությունների դրդապատճառների մակերեսային ուսումնասիրությունը վտանգավոր է ոչ միայն կոնֆլիկտակիր կողմերի, այլև տարածաշրջանի մյուս բոլոր երկրների համար: Քանի որ լարվածության համեմատական դադարը նոր կայծով է բռնկում նախկին կոնֆլիկտը՝ ներգրավելով կամ խորապես ներքաշելով այլ երկրների: Ըստ Դ. Լեյքի և Դ. Ռոտշիլդի՝ հնարավոր է վերջիններիս տարածման երկու հավանական տարբերակ՝[20].

• *Դիֆուզիա (ներթափանցում).* գործում է այն իրավիճակում, երբ մի երկրի շարունակական կոնֆլիկտը հատում է մյուսի սահմանը: Այն հիմնականում տեղեկատվական հոսքի միջոցով է իրականացվում, որն ազդում է հարևան երկրի էթնիկ խմբերի համոզմունքների վրա: Հակամարտության սահմանահատումը սովորաբար բացասական անդրադարձ է ունենում վերջինիս առնչված բոլոր երկրների վրա, սակայն, մյուս կողմից, օգնում է հարևան էթնիկ խմբերի պահանջները հիմնավորելուն:

• *Էսկալացիա (գործողությունների անընդհատ և աստիճանական ծավալում).* երբ մի երկրի էթնիկ կոնֆլիկտը կարող է միջազգային հակամարտության ծագման «հրարձակ» դառնալ:

Այսպիսով, յուրաքանչյուր հակամարտություն բաղկացած է դրդապատճառներից, ստույգ պատճառներից և սրմանը նպաստող գործոններից[21]: Դրդապատճառը էթնոքաղաքական հակամարտության առաջին օղակն է, որը որոշակիորեն անկառավարելի է, քանզի հակամարտությունների ծագմանը նպաստողը միայն մարդը չէ, այլև գոյություն ունեն պատմական, աշխարհագրական, տնտեսական, մշակութային և քաղաքական այնպիսի գործոններ, որոնք հաճախ պայմանավորում են էթնոքաղաքական հակամարտության ծագումը և հետագա ընթացքը: Ակնհայտ է, որ էթնոքաղաքական հակամարտությունների տարատեսակները բազմազան են, որոնք էլ պայմանավորված են դրդապատճառների բազմազանությամբ: Սակայն դրանք բոլորն էլ պարունակում են իրենց մյուսներից տարանջատելու և եզակիորեն ներկայանալու վտանգավորություն: Կարծում ենք՝ դա էթնոքաղաքական հակամարտությունների դրդապատճառների դասակարգման հստակ սխեմայի բացակայությամբ է պայմանավորված: Էթնոքաղաքական կոնֆլիկտարաններն էլ, իրենց հերթին, ներկայումս առավելապես զբաղված են լուծումներ առաջարկելով՝ առանց կոնֆլիկտի նախապատմությունը և դրդապատճառները խորը ուսումնասիրելու:

---

[20] **Lake D. A., Rothschild D.** *(eds.) The International Spread of Ethnic Conflict: Fear, Diffusion and Escalation. Princeton, NJ, 1998, p. 17.*

[21] *Panel on Nationalism in the USSR: Environmental and Territorial Aspects (Soviet Geography), Princeton, vol. XXX, June 1989, p. 441-509.*

ПОБУДИТЕЛЬНЫЕ ПРИЧИНЫ ЭТНОПОЛИТИЧЕСКИХ КОНФЛИКТОВ

АЗИЗЯН А. А.

Резюме

В ряду основных побудительных причин этнополитических конфликтов особо следует выделить принцип самоорганизации этнических групп, а точнее самоопределения, порождающий сам конфликт, который часто оказывается неразрешимым, пополняя число "замороженных конфликтов".

Между течением и проявлением "традиционного" и "современного" конфликта нет особых различий. В различных социоэкономических, общественных системах этнический конфликт постепенно превращается в этнополитический, политизируя этнические требования и тем самым откладывая разрешение конфликта. Решение подобных конфликтов предполагает их детальное изучение с целью урегулирования последних.